

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Բարի մամա» բարեգործական ՀԿ

31 դեկտեմբերի 2019թ. և 31 դեկտեմբերի 2018թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Գործունեության մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հ. + 374 10 500 964
+ 374 10 500 961

Grant Thornton CJSC

Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia

T + 374 10 500 964
+ 374 10 500 961

«Բարի մամա»

բարեգործական ՀԿ-ի հտորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բարի մամա» բարեգործական ՀԿ-ի (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, ինչպես նաև այդ ամսաթվերին ավարտված տարիների գործունեության մասին հաշվետվությունները, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունները և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարիների ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

Մենք դարձել ենք Կազմակերպության աուդիտոր 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո և, հետևաբար, հնարավորություն չենք ունեցել մասնակցելու 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամարկղում առկա կանխիկ միջոցների գույքագրմանը: Ի լրումն, մենք հնարավորություն չենք ունեցել իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները հաստատելու համար: Հետևաբար, մենք չենք կարող գնահատել, արդյոք կա 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամարկղում առկա կանխիկ միջոցների մնացորդը ճշգրտելու անհրաժեշտություն:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական

հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել

հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների որջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն



15 մարտի 2021թ.

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած)
Ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	105,583	45,099	9,653
Ոչ ընթացիկ կանխավճարներ	5	45,060	35,186	-
		<u>150,643</u>	<u>80,285</u>	<u>9,653</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ		-	223	-
Դեբիտորական պարտքեր	6	3,340	801	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	11,286	18,607	30,198
		<u>14,626</u>	<u>19,631</u>	<u>30,198</u>
Ընդամենը ակտիվներ		<u>165,269</u>	<u>99,916</u>	<u>39,851</u>
Պարտավորություններ և զուտ ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	148,343	77,985	7,353
Փոխառություններ		1,600	2,300	2,300
		<u>149,943</u>	<u>80,285</u>	<u>9,653</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Կրեդիտորական պարտքեր	9	807	303	200
Շահութահարկի գծով պարտավորություն		358	93	-
Հետաձգված եկամուտ	10	12,160	18,617	29,998
		<u>13,325</u>	<u>19,013</u>	<u>30,198</u>
<i>Զուտ ակտիվներ</i>				
Կուտակված արդյունք		2,001	618	-
		<u>2,001</u>	<u>618</u>	<u>-</u>
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		<u>165,269</u>	<u>99,916</u>	<u>39,851</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. մարտի 15-ին:

Մարինե Առուսյան

Նախագահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ.	2018թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհներից եկամուտ	11	40,712	14,333
Այլ եկամուտ		1,798	473
Հատուցումներ աշխատակիցներին		(15,579)	(1,188)
Նվիրատվություններ և ֆինանսական աջակցություն		(9,667)	(7,946)
Կոմունալ, կապի գծով և տպագրության ծախսեր		(5,125)	(164)
Միջոցառումների գծով ծախսեր		(4,088)	(1,003)
Տրանսպորտային ծախսեր		(2,102)	(587)
Մաշվածություն և անորտիզացիա		(1,159)	(80)
Այլ ծախսեր		(3,427)	(3,279)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ		378	152
Արդյունք մինչև հարկերը		1,741	711
Շահութահարկի գծով ծախս	12	(358)	(93)
Տարվա արդյունք		1,383	618

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ չանցած)	-	-
Տարվա արդյունք	618	618
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	618	618
Տարվա արդյունք	1,383	1,383
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,001	2,001

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից ստացված դրամական միջոցներ	104,245	71,482
Հաճախորդներից ստացված և այլ դրամական միջոցներ	1,519	616
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(97,236)	(82,461)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(11,361)	(872)
Վճարումներ Պետական բյուջե	(3,716)	(317)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(6,549)	(11,552)
Վճարված շահութահարկ	(93)	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զույգ դրամական միջոցներ	(6,642)	(11,552)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառության մարում	(700)	-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զույգ դրամական միջոցներ	(700)	-
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(7,342)	(11,552)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	21	(39)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	18,607	30,198
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	11,286	18,607

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Բարի մամա» բարեգործական ՀԿ-ն Հայաստանի Հանրապետությունում հիմնված կազմակերպություն է: Կազմակերպությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմի 2015թ. մայիսի 11-ին 211.171.856839 գրանցման համարով:

Կազմակերպության գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների, միջազգային պայմանագրերի և Կազմակերպության Կանոնադրության համաձայն:

Կազմակերպությունը ստեղծվել է հայ մայրիկների ջանքերով, որի հիմնական նպատակն է աջակցել հաշմանդամության պատճառով լքված և մանկատներում հայտնված հաշմանդամություն ունեցող երեխաներին: Կազմակերպությունն ունի մոտ 8,000 անդամ:

Կազմակերպության առաքելությունը երեխաներին տուն և ընտանիք պարգևելն է:

Կազմակերպության շահառուներն են.

- Հղիության և հետծննդաբերական պաթոլոգիաների առումով ռիսկային խմբերին պատկանող հղիկամ վաղ հետծննդաբերական շրջանում գտնվող կանայք,
- Միայնակ և/կամ սոցիալապես անապահով, անաշխատունակ հղի կամ վաղ հետծննդաբերական շրջանում գտնվող կանայք,
- Առողջական խնդիրների և/կամ հաշմանդամության պատճառով կենսաբանական ծնողի կողմից լքված 0-6 տարեկան երեխաները,
- Մանկատան սաները,
- Մանկատանից դուրս եկած 18 տարին լրացած և խնամակալ չունեցող երիտասարդները,
- Սոցիալապես անապահով ընտանիքները,
- Այն կազմակերպությունները, որոնք աշխատում ենն վերը նշված թիրախային խմբերի հետ,
- Նախադպրոցական հաստատությունները:
- Ներառական կրթություն իրականացնող և չիրականացնող հանրակրթական դպրոցները:

Կազմակերպության գործունեության հասցեն է Ալգեգործական 6-րդ թաղամաս 1/2, գյուղ Ջրվեժ, ՀՀ:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4 մարդ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2 մարդ):

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր

հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Շարունակելով 2018 թ. գրանցված աճի համոզիչ տեմպը՝ 2019թ. տարեկան տնտեսական աճը մնացել է կայուն: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել առևտուրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Կազմակերպության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՀՄՍԻ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՀՄՍԻ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Կազմակերպության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 14-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընկերության ընդունել է իր գործունեության համար կիրառելի և ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ և ՖՀՄՍ-ների առաջին անգամ ընդունումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2019թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ-ներին անցման ազդեցությունը Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն 20-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 553.65 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հողվածները, բացառությամբ հողի, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Շենքեր և շինություններ - 20 տարի
- Տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ, - 8 տարի
- Արտադրատնտեսական գույք և այլն - 8 տարի
- Այլ - 5-8 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են հումքի, կամ նյութի ձևով՝ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները, և չեն ճանաչվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Կազմակերպությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած արդյունքը ճանաչվում է տարվա արդյունքում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով պահուստներում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված արդյունքին:

3.8 Պահուստներ

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

3.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Կազմակերպությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Կազմակերպության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Դոնորների կողմից անվերապահորեն ստացված դրամաշնորհները ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում են տարվա արդյունքում, երբ դառնում են ստացման ենթակա:

Ստացված շնորհների գծով ամբողջ եկամուտը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ, երբ այն դառնում է ստացման ենթակա, այսինքն՝ այն պահին, երբ Կազմակերպությունը ստորագրում է իրավական պայմանագիր: Հետաձգված եկամուտը փոխանցվում է գործունեության մասին հաշվետվություն՝ շնորհին կից պայմանների իրականացմանը զուգընթաց: Ընդ որում, եթե հետաձգված եկամտի գումարը գերազանցում է Կազմակերպության կողմից շնորհին կից պայմանների իրականացման համար պահանջվող գումարը, գերազանցող մասը նվազեցվում է հետաձգված եկամտի մնացորդից և համապատասխան դոնորի գծով դեբիտորական պարտքի մնացորդից: Այս ճշգրտման գումարը չի արտացոլվում գործունեության մասին հաշվետվությունում:

Եթե ճանաչված դրամաշնորհի գումարը գերազանցում է Կազմակերպության ծախսերը, որոնք անհրաժեշտ են ամբողջ դրամաշնորհի իրականացման համար, ապա գերազանցված գումարը նվազեցվում է ճանաչված հետաձգված եկամտի և դրամաշնորհների գծով դեբիտորական պարտքի գումարից:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Կազմակերպությունը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությանը մատուցում են ծառայություններ, Կազմակերպության աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Կազմակերպությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Կազմակերպությունը ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում դրամաշնորհներից և նվիրատվություններից:
Դրամաշնորհներից ստացված եկամտի հաշվապահական հաշվառման քաղաքականության
համար տե՛ս ծանոթագրություն 3.9:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հող, շենքեր և շինություններ	Տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ	Արտադրատնտեսական գույք և այլն	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ չանցած)	7,818	-	-	1,835	9,653
Ավելացում	-	1,800	3,344	30,382	35,526
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,818	1,800	3,344	32,217	45,179
Ավելացում	-	8,186	8,885	44,603	61,674
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,818	9,986	12,229	76,820	106,853
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտ չանցած)	-	-	-	-	-
Տարվա հաշվարկ	-	21	59	-	80
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	21	59	-	80
Տարվա հաշվարկ	-	270	920	-	1,190
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	291	979	-	1,270
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,818	1,779	3,285	32,217	45,099
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,818	9,695	11,250	76,820	105,583

5 Ոչ ընթացիկ կանխավճարներ

Կազմակերպությունը կառուցում է բարի տնակ սոցիալական կենտրոնը: Համաձայն կապալի պայմանագրի՝ Կազմակերպությունը պայմանագրով սահմանված չափով կանխավճարներ է կատարում՝ որպես երաշխիք, որ կապալի պայմանագիրն ամբողջությամբ ենթակա է կատարման: Սույն գումարներն ամբողջությամբ ենթակա են վերադարձի, եթե կապալառուն հրաժարվի կատարել կապալի պայմանագրով ստանձնած իր բոլոր պարտականությունները:

6 Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Այլ դեբիտորական պարտքեր	7	1
	<u>7</u>	<u>1</u>
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	3,333	800
	<u>3,333</u>	<u>800</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	<u>3,340</u>	<u>801</u>

Տե՛ս ծանոթագրություն 16՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	244	6,395
Բանկային հաշիվներ	11,042	12,212
	<u>11,286</u>	<u>18,607</u>

Տե՛ս ծանոթագրություն 16՝ դրամարկղում և բանային մնացորդների արժույթների բացահայտման համար:

8 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	77,985	7,353
Եկամտին վերաբերող շնորհներից փոխանցում	71,548	70,712
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 11)	(1,190)	(80)
Տարեվերջի մնացորդ	<u>148,343</u>	<u>77,985</u>

Ընկերության բոլոր ակտիվները ձեռք են բերվել դրամաշնորհային միջոցներով:

9 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	306	303
Պետական բյուջեին վճարվելիք կրեդիտորական պարտքեր	478	-
Այլ	23	-
	<u>807</u>	<u>303</u>

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

10 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	18,617	29,998
Տարվա ընթացքում ստացված	105,371	73,638
Ակտիվներին վերաբերող շնորհներին փոխանցում	(71,548)	(70,712)
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 11)	(39,422)	(14,114)
Դրամաշնորհի վերադարձ	(501)	-
Փոխարժեքով մնացորդի վերազնահատման ազդեցություն	(357)	(193)
Տարեվերջի մնացորդ	12,160	18,617

Ավելացումները ներառում են հետևյալ կազմակերպություններից հաշվեգրված նվիրատվությունները.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արվեստի, երաժշտության և սպորտի ասոցիացիա	27,317	9,612
Մասնավոր նվիրատվություններ	21,363	30,486
ՅՈՒՆԻՍԵՖ	21,260	-
ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	20,202	-
Քրոնիմետ ՍՊԸ	6,623	3,961
Հայկական բարեգործական ընդհանուր միություն	1,635	16,366
Այլ կազմակերպություններ	6,971	13,213
	105,371	73,638

11 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,190	80
Եկամտին վերաբերող շնորհներ	39,422	14,114
Այլ նվիրատվություններ	100	139
	40,712	14,333

12 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	358	93
	<u>358</u>	<u>93</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	1,741		711	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%)	348	20.0	142	20.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	10	0.6	(49)	(6.9)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	<u>358</u>	<u>20.6</u>	<u>93</u>	<u>13.1</u>

13 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսի բռնկման ազդեցությունը այս պահին անհայտ է: COVID-19-ի հետ կապված զարգացող իրավիճակը կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության շարունակականության կամ գործառնությունների ծավալի վրա: Ֆինանսական հաշվետվությունները չեն ճշգրտվել, որպեսզի արտացոլեն վերը նշվածի հնարավոր ազդեցությունը:

Միաժամանակ 2020. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ուժերը հարձակվեցին Արցախի վրա: Որպես Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավոր, Հայաստանի Հանրապետությունը ևս ներգրավվեց պատերազմական գործողություններում: Արդյունքում, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հայտարարվեց ռազմական դրություն. Չնայած ռազմական գործողությունները անմիջականորեն Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի չեն ունեցել և վերջինիս հավանականությունը բավականին փոքր է, այնուամենայնիվ կա ռիսկ, որ ստեղծված իրավիճակը դրանից բխող հետևանքներով կարող է էական առումով բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության վրա:

Սույն ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում վերը շարադրված իրադարձությունների հնարավոր ազդեցությունը:

14 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

14.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Կազմակերպությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Շնորհների ճանաչում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.9-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Կազմակերպությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար, Կազմակերպությունը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կբավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհը ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ և դրնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Կազմակերպության հնարավորության վրա:

15 Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	1
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,286	18,607
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	11,293	18,608

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով սահմանվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	329	303
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	329	303

16 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Կազմակերպությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Կազմակերպությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Կազմակերպությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Կազմակերպության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Կազմակերպության դրամաշնորհներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են արտարժույթով:

2019թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մնացորդներ չունի:

2018թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Կազմակերպությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հողված

	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ	
Մնացորդներ բանկում	7,953
Զուտ արդյունք	7,953

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Կազմակերպության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով 2018թ. տարվա արդյունքի վրա կազդի 795 հազար դրամով:

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Կազմակերպության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Կազմակերպությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Կազմակերպությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Կազմակերպությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը (ներառյալ դոնորների կողմից ստացված դրամաշնորհները), մասնավորապես՝ դրամական միջոցները: Ընկերության դրամական միջոցները գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

17 Իրական արժեքի չափում

Կազմակերպությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք

հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

18 Պայմանականություններ

18.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Կազմակերպությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Կազմակերպության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

18.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19 Կապակցված կողմեր

Կազմակերպության կապակցված կողմերը ներառում են Կազմակերպության խորհրդի անդամներին, նախագահին և նախագահի ընտանիքի անդամներին:

19.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները հետևյալն են.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	4,745	525
Փոխառության մարում	700	-
Ծառայությունների մատուցում	199	-
	5,644	525

20 ՖՀՄՍ-ների կիրառումն առաջին անգամ

Համաձայն ծանոթագրություն 3.1-ի՝ հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը ընդունել է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները: Հետևաբար, ՖՀՄՍ-ներին անցումը կատարվել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Կազմակերպությունը կիրառել է ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը»: ՖՀՄՍ-ների համաձայն՝ Կազմակերպությունը կատարել է բոլոր պարտադիր ճշգրտումները: Կազմակերպության նկատմամբ այլընտրանքային ճշգրտումները կիրառելի չէին: ՖՀՄՍ-ներին անցման ազդեցությունը Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ստորև.

Ընդհանուր դրույթներ

ՖՀՄՍ-ներով առաջին անգամ պատրաստված ֆինանսական հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին երեք հաշվետվություն (նախկին անվանումը՝ հաշվապահական հաշվեկշիռ), Գործունեության մասին երկու հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին երկու հաշվետվություն և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին երկու հաշվետվություն և դրանց առնչվող ծանոթագրությունները՝ ներառյալ համադրելի տեղեկատվությունը:

Դրամական միջոցների մասին հաշվետվություն

ՖՀՄՍ-ների համաձայն՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը առաջին անգամ պատրաստվել է ուղղակի մեթոդով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՖՀՄՍ-ների առաջին անգամ կիրառման արդյունքում Կազմակերպությունը որդեգրել է կիրառելի բոլոր նոր և վերանայված ստանդարտները, ինչպես նաև, առաջին անգամ բացահայտել է ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կատեգորիաները՝ ներառյալ Կազմակերպության ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը (տե՛ս ծանոթագրություններ 15 և 16):